Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ ***http://www.armin.am***

էլ. փոստ՝ ***info@armin.am***

1909թ. ԱԴԱՆԱՅԻ ՋԱՐԴԵՐԻՆ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Անի Ոսկանյան

1908թ. երիտթուրքական հեղաշրջումից մեկ տարի անց տեղի ունեցած Ադանայի կոտորածը կայսրության քրիստոնյա ժողովուրդների, մասնավորապես՝ հայերի նկատմամբ իրականացվելիք ծրագրի առաջին նախանշանը հանդիսացավ: Ադանայի կոտորածը, որին զոհ գնաց շուրջ 30 հազ. հայ, կազմակերպվեց կենտրոնական իշխանության կողմից: Իշխանության հրահանգով բացվեցին զինապահեստները, զինվեց ամբոխը, իսկ ավելի մեծ կորուստներ պատճառած երկրորդ ջարդն իրականացվեց «կարգ ու կանոն» հաստատելու համար Ադանա բերված սահմանադրական ազատարար բանակի միջոցով, որն ինքնին խոսուն փաստ է պետական միջամտության մասին:

Կառավարության քաղաքականության իրագործումը հանձնարարվեց Ադանայի վալի Ջևադ բեյին և զինվորական հրամանատար Մուստաֆա Ռեմզի փաշային: Ադանայի նոր կառավարիչն ու զինվորական հրամանատարը սկսեցին գաղտնի խորհրդակցություններ գումարել, զորամասեր տեղափոխել Կիլիկիա, զինել խուժանին և մշակել հայկական ջարդերի ծրագրեր: Ադանայի հոգևոր առաջնորդ Մուշեղ Եպիսկոպոսը նշում է, որ մեծ քանակությամբ զենք և զինամթերք է տեղափոխվել Կիլիկիայի զորանոցները, և, որ Աբդուլ Համիդը մի քանի հազար ոսկի է նվիրել համիդեական զորագնդերին:[1]

Ջարդերի նախօրեին «Միություն և առաջադիմություն» կոմիտեի անդամ Իսսան Ֆիքրիի խմբագրությամբ Ադանայում հրատարակվող «Իթիդալ» թերթի կողմից կազմակերպվեց ժողով, որին, ինչպես հավաստում է Հ. Պապիկյանը,[2] մասնակցում էին «բոլոր իսլամ դասակարգերը - պաշտոնեայ, կրօնական, զինուոր և գործաւոր»:[3] Այնուհետև բոլորը լծվեցին զանգվածային հարձակում նախապատրաստելու գործին: Վերոհիշյալ ժողովից հետո, գրգռված ամբոխը՝ մշտապես այնտեղ գտնվող պահակազորի կողմից առանց որևէ դիմադրության հանդիպելու, թալանում է զինապահեստը: Սա ինքնին վկայում է «...որ զէնքերը բաշխուած են եղել կառավարական հրամանով», քանի որ «...միեւնոյն բանը պատահած է նահանգին բոլոր այն մասերուն մէջ՝ ուր այս պատճառներով ջարդեր տեղի ունեցած են»:[4] Զենքերը բաժանելու մասին տեղեկացնում է նաև Հ. Թերզյանը՝ գրելով. «Երկաթուղիի կայարանը պաշարող վայրագ խուժանը՝ բարձրաձայն գոչերով զօրանոց վազեց և հոն բաշխեցին մնացած զէնքերն էլ»:[5] Ադանայի երիտթուրքական կազմակերպության ղեկավար Ծյուքրին ևս, զինապահեստը բացելով, ողջ զենքը բաժանել է թուրք ամբոխին:[6]

Զենքի նպատակային բաժանման մասին վկայում է նաև այն, որ ավելի ուշ, երբ ինքնապաշտպանության դիմած հաճնցի հայերը զինամթերք ձեռք բերելու նպատակով հարձակվում են զինապահեստի վրա, անհաջողության են մատնվում,[7] և հետ շպրտվում պահակազորի կողմից:

1 Մուշեղ Եպիսկոպոս, Ատանայի ջարդը և պատասխանատուները, Գահիրէ, 1909, էջ 56:
2 Հակոբ Պապիկյանը եղել է Օսմանյան խորհրդարանի պատգամավոր և խորհրդարանի կողմից՝ Ադանայի կոտորածները հետաքննելու համար ստեղծված հանձնախմբի անդամներից մեկը:
3 Յ. Պապիկեան, Ատանայի Եղեռնը, Կ. Պոլիս, 1919, էջ 25:
4 Նույն տեղում, էջ 26:
5 Թէրզեան Յ., Կիլիկիոյ աղէտը, Կ. Պոլիս, 1912, էջ 164:
6 Գասպարյան Ռ., Հայկական կոտորածները Կիլիկիայում, Երևան, 2005, էջ 67:
7 Նույն տեղում, էջ 76:

Մարտի 31-ին, երբ դեռևս ջարդի նախաքայլերն են կատարվում, տեղական կառավարությունը ոչինչ չի ձեռնարկում գալիք աղետը կանխելու համար: Ապրիլի 1-ին խուժանը շուկայում և թուրքական թաղերում հայերին կոտորելուց հետո հարձակվում է հայկական թաղամասերի վրա: Կարգ պահպանելու համար կանչված ռեդիֆները (պահեստային զինվորներ) խառնվում են ամբոխին և ավելի վատթարացնում դրությունը: Մուշեղ Եպիսկոպոսը վկայում է. «...Զինուորական ջոկատ մը, որուն իբր թէ պաշտօնը հանրային ապահովութեան հսկելն էր, իրեն տրուած գաղտնի հրահանգներու համաձայն, զինուորական փողի ազդանշանով և լուսածին համաձայն Ռէյիս Սէլիմ բեյի հրամանատարութեամբ, կը պաշարէ Ծապանիյէ թաղը և կանոնավոր գնդակահարութեամբ յարձակում կը գործէ Քրիստոնէաբնակ թաղի մը վրայ...»:[8]

Մի քանի օր շարունակվող ջարդը դադարեցնելու համար տեղական կառավարությունը՝ ի դեմս վալիի, կայազորի հրամանատարի և ոստիկանության պաշտոնյաների, ոչինչ չի նախաձեռնում: Միակ բանը, որով զբաղված էին իշխանությունները, կոտորված հայերին հավաքելով ու սայլերի վրա կիտելով գետը լցելն էր:[9]

Թեև Փարիզում Օսմանյան դեսպանատան հայտարարությունում ասվում էր, որ. «Իրականութեան մէջ ալ, խռովութեանց ընդարձակումը բաւականաչափ պատրաստ զինուոր չգտնելուն և մօտ նահանգները ուղած զինուորական ուժին սպասուած ժամանակին որոշեալ վայրեր հասնել չկարենալուենն արդիւնք էր»,[10] սակայն, իրականում, ջարդերը սկսելու առաջին օրը՝ ապրիլի 1-ին, և դրանք դադարեցնելու օրն Ադանայում նույնքան զինվոր կար: «Զինուորները, որ ջարդէն առաջ իբր թէ փոքրաթիվ խուժանը չէին կրցած զսպել, ջարդէն ետքը անոր տասնապատիկը եղող խուժանը զսպեցին կէս ժամուայ մէջ»,[11] գրում է Հ. Թերզյանը: Այլ փաստեր ևս հավաստում են, որ զինվորականները ցանկության դեպքում կարողացել են կանխել կամ կասեցնել ջարդերը. «...Հանկարծ Միսիսի հազարապետ Լութֆի պէյը՝ մի քանի զինուորներով շուկան եկաւ և զինուորական փողերով և մունետիկներով խուժանին հրամայեց, որ ջարդը դադարեցնեն: Վայրագ խուժանը՝ վերի թաղի մէջ վաթսուն հոգի ջարդելէն ետքը դադրեցրեց յարձակումը»:[12]

Զափազանց հետաքրքիր է Սահմանադրական 3-րդ բանակի սպաների և զինվորների գնահատականներն Ադանայում ապրիլի 6-7/19-20 տեղի ունեցած առաջին ջարդի վերաբերյալ, որին նրանք դեռևս չէին մասնակցել. «Միթէ ինն ամսէ ի վեր Իթթիհատը քիչ աշխատեց երկրին մէջ հանդարտութիւն պահպանելու: Ատանայի կողմերն այդքան արիւնհեղութիւն կ'ըլար, եթէ Իթթիհատն անցեալ շաբաթուն ի վիճակի ըլլար գործելու Ատանայի վիլայեթին մէջ: Ինն ամիսէ ի վեր քանի քանի խռովութեան, անկարգութեան առաջն առնուեցաւ Անատոլուի մեջ մի միայն Իթթիհատի գործակալներուն արագափոյթ օգնութեան շնորհիվ»:[13] Կամ, ինչպես տեղեկացնում է Բյուզանդիոնը, «Սելանիկի և Ադր. Պոլսոյ զօրքն և իրենց սպաներն, որ Պոլիս մտան Շաբաթ օրուան արիւնալի յաղթանակէ ետքը՝ ջերմ համակրանքով կ'վարուին մանաւանդ Հայերուն հետ և ցաւ կը յայտնին Կիլիկիոյ ջարդերուն համար»:[14]

8 Մուշեղ Եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 50-51:
9 Геноцид армян в Османской империи, сборник документов и материалов, под редакцией М. Г. Нерсисяна, Ереван, 1966, N 99. ст.175.
10 Աշճեան Յ., Ատանայի Եղեռնը և Գոնիայէ Յուշեր, Նիւ Եորք, 1950, էջ 42:
11 Թէրզեան Յ., նշվ. աշխ., էջ 55:
12 Նույն տեղում, էջ 183:
13 «Բիւզանդիոն», թիւ 3,807, Կ. Պոլիս, 1909, ապրիլ 7-20:
14 «Բիւզանդիոն», թիւ 3,812, Կ. Պոլիս, 1909, ապրիլ14:

Շարժուն բանակի հրամանատար Հյուսէյն Հյուսնի փաշայի՝ ժողովրդին ուղղված հայտարարությունում ասվում էր. «Ազատարար Բանակին նպատակն է Սահմանադրութիւն միանգամ ընդ միշտ ազատել ամէն վտանգէ և հռչակել թե Սահմանադրութիւնէն վեր որևէ ոյժ գոյութիւն չունի այս երկրին մէջ»:[15] Իսկ Գ. զորաբանակի և շարժուն բանակի հրամանատար Ա. Ներիգ Մահմուտ Շևքեթի 1325թ. ապրիլի 12 իր հայտարարության մեջ, գրեթե նույնին հավելում է, որ «ամէն ոք պատրաստ է ըստ այնմ խոհեմութեամբ և ակնածութեամբ վարուիլ»:[16]

Թեև երիտթուրք գործիչները շարունակ խոսում էին սահմանադրությունից, մատնանշում էին իրենց ու նախկին բռնապետական իշխանությունների միջև եղած տարբերությունը, սակայն ինչպես ցույց տվեց դեպքերի հետագա ընթացքը, նրանք գործում էին նույն մեթոդներով: Ադանայում իթթիհադական ազատարար բանակը ոչ միայն իրականացրեց հայերի կոտորածը, այլև նրա բոլոր գործողությունները ղեկավարվում էր երկրի բարձրագույն մարմնի՝ իշխանության կողմից:

Զինադադարի չորրորդ օրը Կ. Պոլսի Ազատարար Շարժուն Բանակի հրամանատար Մահմուտ Շևքեթ փաշան հեռագրով տեղեկացնում է, թե «Պոլսոյ վրայ քայլող Ազատութեան բանակէն վաշտ մը մեկնած է Տէտէ-Աղաճէն դէպի Ատանա»:[17]

Ապրիլի 12-ին Սալոնիկից Ադանա ժամանեց սահմանադրական 3-րդ բանակի երկու զորագունդ՝ ուղղարկված Իթթիհադի կենտրոնական վարչության կողմից «կարգ ու կանոն» հաստատելու համար: 11/24 ապրիլի Ադանայի վալի Զևադ բեյի գաղտնագիր հարցմանը՝ ինչպես գործել, Իթթիհադի կենտրոնական վարչության կողմից տրվեց գաղտնի հրաման. «Ընտրեք կարճ ճանապարհ»:[18] Այլ աղբյուրներ ևս հաստատում են, որ. «Այս անգամ նրանք (զինվորները Ռ. Ա.) հրամանները էին ստանում իթթիհադի առաջնորդների կողմից»:[19]

Սահմանադրական բանակի զինվորները դեռ չէին հասցրել Քըշլա Մեյդանի շրջանում՝ քաղաքի դարպասների մոտ, տեղավորվել, երբ նրանց ուղղությամբ հնչեցին կրակոցներ: Կրակոցները, ինչպես հետագայում ցույց տվեց հետաքննությունը, պատահաբար, առավել ևս՝ հայերի կողմից կամ էլ զինվորների վրա հարձակվելու նպատակով չէին հնչել: Կրակոցները հանդիսացան այն ցանկալի առիթը, որը զորքին՝ գործելու, իսկ Մուստաֆա Ռեմզի փաշային՝ առաջին ջարդից հետո դեռևս ողջ մնացած հայերի վրա հարձակման հրաման տալու հնարավորություն տվեց: «Մուստաֆա Ռեմզի փաշան՝ առանց այդ սուտ զրույցները քննելու և ստուգելու՝ փողհարութեամբ անմիջապես յարձակումի հրաման տուած է զինվորներուն»,[20] ովքեր (զինվորները-Ռ. Ա.) արդեն դժգոհ էին, որ պետք է ստիպված լինեն պաշտպանել քրիստոնյաներին իրենց հավատակիցներից:[21]

Ապրիլի 12-ի լույս 13-ի գիշերը խառնամբոխը սահմանադրական բանակի զինվորների գլխավորությամբ հարձակվեց Ապգարյան վարժարանի վրա, որտեղ ապաստանել էին առաջին ջարդից փրկված շուրջ 2000 հայեր:[22] Զորքը շրջապատում է հաստատությունը

15 «Բիւզանդիոն», թիվ 3,807, Կ. Պոլիս, 1909, ապրիլ 7-20:
16 «Բիւզանդիոն», թիվ 3,811, Կ. Պոլիս, 1909, ապրիլ 13:
17 Թէրզեան Յ., նշվ. աշխ., էջ 94:
18 Тунян В.Г. Младотурки и армянский вопрос, ч. 1, 1908-1912, Ереван, 2004, стр. 111
19 Գասպարյան Ռ., նշվ. աշխ., էջ 65: Duckett F., Turkish Atrocities. The Young Turks and the Truth About Holocaust at Adana in Asia Minor, During April, 1909, 1911, p.32.
20 Աշճեան Յ., նշվ. աշխ., էջ 25, 62:
21 Հայերի ցեղասպանությունն Օսմանյան կայսրությունում, (փաստաթղթերի և նյութերի ժողովածու Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ), Երևան, 1991, էջ 254:
22 Adossidès A., Arméniens et Jeunes-Turcs. Les massacres de Cilicie, Paris, 1910, p. 54.

այն ողողում են նավթով և հրկիզում:[23] Այնուհետև, այրվող շենքից չհեռանալով, սահմանադրական բանակի զինվորները գնդակահարում են յուրաքանչյուրին, ով փորձում է կրակի բոցերից դուրս փախչել: Ապգարյան դպրոցից հետո հրկիզվում և ավերվում են այլ դպրոցներ, եկեղեցիներ, տարբեր հաստատություններ, որտեղ փորձել էին ապաստան գտնել հայերը:

Ականատեսը վկայում է, որ իթթիհատի զինվորները. «առաջին աղէտէն ավելի սոսկալի ահ ու դողի մատնեցին զմեզ»:[24]

Թերևս երկրորդ ջարդն առավել սոսկալի էր ոչ միայն այն պատճառով, որ ջարդին մասնակցում և ջարդն իրականացնում էին կանոնավոր զորամասերը, այլ նաև՝ որ կառավարությունը, նախապես հայերին զինաթափելով, զրկել էր նրանց պաշտպանվելու որևէ հնարավորությունից: Այս անգամ հայկական թաղամասերը հրկիզում էին նոր ժամանած զինվորները, որոնք «վրեժի միայն այդ միջոցն էին գտել, որովհետև թուրք և քուրդ խուժանը մինչ այդ ամեն ինչ թալանել էր»:[25] Դեռևս Մերսինում գնացք նստելուց առաջ նրանք սպառնացել էին. «Եթե մեր ժամանման պահին որևէ սպանված մահմեդական գտնեք, գիտենք թե ինչ կանենք»:[26]

Ինչպես նշում է Կ.Պոլսի ռուսական դեսպանը. «Կարճ ժամանակով ընդհատված խժդրժությունները Ադանա քաղաքում վերսկսվել են՝ հենց որ թուրքական կառավարության կարգադրությամբ անդորրը վերականգնելու համար այնտեղ է ժամանել ռումելիական զորքերի մի ջոկատ: Զինվորներն անցել են տեղի մուսուլման բնակչության պարագլուխների կողմը և սկսել կոտորել քրիստոնյաներին՝ խտրություն չդնելով ոչ՝ սեռի, ոչ՝ տարիքի մեջ, և թալանել ու հրդեհել նրանց տները»:[27] Ինչպես իրավամբ նկատում են Ադանայի հայ երևելիները. «Ապրիլի 12 և 13 օրերուն կատարված աւերածութիւններն ու մարդասպանութիւնները առաջանէն աւելի մեծ ու ահավոր եղած են...»:[28] Ժամանակակիցները արձանագրում են, որ ամենացավալին այն է, թե «մենք հոս հազարու մը ճիգ խնդրելով թախանձելով, որ անմիջապես զօրք փութացուի, վայրագութիւնը ժամ առաջ դադարեցնելու համար, հոն կանոնաւոր զինուորներն իսկ կը՝մասնակցեին Հայերը տեղւոյն վրա ջարդելու, թալանելու»:[29]

Սահմանադրական զորքի զինվորները ոչ միայն գործուն մասնակցություն են ունենում կոտորածներին, այլև անմասն չեն մնում ավար ձեռք բերելու գործում: «Բյուզանդիոնն» արձանագրում է, որ «Զինուորականներն օգնած են թէ՛ այս հափշտակութիւններում, և թէ՛ սպանութիւններում, և՛ աւարառութիւններում»:[30] «Շուկայի ամբողջ երկայնքն հայու խանութ չէ մնացած որ չթալանուի, դրամարկղերը զինուորներու օգնութեամբ հրացանների հարվածներով խորտակուած են»:[31] Ադանայի ջարդից փախած մի հույն հետևյալն է պատմել. «Զորքն օգնեց ամէն կերպ. իրենց հրացաններով թէ մարդ զարկին, եւ թէ խանութներուն դռները կոտրտելով օգնեցին եւ իրենք ալ լցուեցան ավարով»:[32] Ավելի ուշ,

23 Նույն տեղում, p. 55.
24 Թէրզեան Յ., նշվ. աշխ., էջ 34:
25 Գասպարյան Ռ., նշվ. աշխ., էջ 65, «Գործ», Թիֆլիս, 28 ապրիլ, 86, 1909:
26 Նույն տեղում, էջ 64:
27 Նույն տեղում, էջ 231:
28 Աշճեան Յ., նշվ. աշխ., էջ 44:
29 «Բիւզանդիոն», թիւ 3,816, Կ. Պոլիս, 1909, ապրիլ18-մայիս 1:
30 «Բիւզանդիոն», թիւ 3,814, Կ. Պոլիս, 1909, ապրիլ 16-29:
31 «Բիւզանդիոն», թիւ 3,815, Կ. Պոլիս, 1909, ապրիլ17-30:
32 «Բիւզանդիոն», թիւ 3,808, Կ. Պոլիս, 1909, ապրիլ 8-21:

ջարդից հետո «Նրանք (զինվորները Ա. Ո.) սպաների հրամանատարության ներքո անցնում էին Մերսինի փողոցներով, և փոխադրամիջոց բարձրանում՝ թալանված իրերը ձեռքներին»:[33]

Ջարդից և թալանից զատ զինվորները գիշերները շրջում էին շենքերի շուրջը՝ ջանալով առևանգել երիտասարդ աղջիկներին:[34]

Ադանայի կոտորածներին զուգընթաց ջարդեր էին տեղի ունենում Կիլիկիայի տարբեր հայաբնակ վայրերում: Ապրիլի 1-ին հուզումներ սկսվեցին Տարսոնում: Անգլիական դեսպանի զեկուցագրից պարզվում է, որ այստեղ ջարդերը լայն թափ ստացան, երբ խաժամուժին միացավ 400 զինվոր,[35] որոնք հատուկ գնացքով եկել էին Ադանայից, երբ կոտորածն այնտեղ արդեն ավարտվել էր:[36]

Նույն օրը հարձակման է ենթարկվում նաև Համիդիեն: Հայերը՝ Հովհաննես և Սարգիս Աղազարյանների գլխավորությամբ դիմում են ինքնապաշտպանության, որը ճնշվում է մահմեդական ամբոխի և կանոնավոր զորամասերի օգնությամբ:[37] Ապրիլի 2-ին թուրքական ուժերը 20-30 հազ. ռեդիֆներով և բաշիբոզուկներով շրջապատում են Դյորթ Յոլ գյուղը:[38]

Միևնույն ժամանակ վալին շարունակ դիմում է մայրաքաղաք և լրացուցիչ զորքեր պահանջում՝ հայկական «խռովությունը» զսպելու համար,[39] որը, իհարկե, ոչ թե «խռովությունը» զսպելու և «անկարգությունները» վերացնելու, այլ թուրք խուժանին ավելի ուժեղացնելու նպատակ էր հետապնդում:

Ադանայի կոտորածից հետո թե՛ տեղական կառավարության, և թե՛ հարցաքննվող «ականատեսների» կողմից բազմիցս փորձեր արվեցին որպես ջարդերի կազմակերպիչներ դիտարկել հայերին: Նրանք մեղադրվեցին նաև ապստամբելու փորձերի մեջ կամ, վերջապես, հանդես եկան որպես սադրիչներ, ովքեր հրահրել էին թուրքական կողմին մտնել կռվի մեջ: Սակայն ինչպես գրում է ջարդերին ականատես Սուրեն Պարթևյանը, «Թէ Հայերը գրգռած ըլլան իսլամ խուժանին ատելութիւնն ու մոլեռանդութիւնը իրենց շարժուձևովը, խօսքերովը... Թուրքական իրերուն մօտէն տեղեակ որևէ անձ չգիտեր թէ ոչ մէկ տեղ թուրք խուժանը, որքան էլ գրգռուած ըլլայ, ջարդերու չելլար երբեք՝ եթէ նախապէս տեղական իշխանութեանց քաջալերանքը չունենայ և մեղսակցութիւնն ու աջակցութիւնը չապահովէ: Առանց ադոր ջարդ եղած չէ Թուրքիոյ մէջ և չի կրնար ըլլալ»:[40]

Հետագայում մանրամասները պարզելու նպատակով կազմվեց վերաքննիչ հանձնաժողով, իսկ մեղավորներին պատժելու համար ստեղծվեց Ռազմական ատյան:

Զինվորական դատարանը, որ բաղկացած էր կիլիկյան կոտորածների կազմակերպիչներից, ղեկավարներից ու մասնակիցներից, ձերբակալվածների մի մասին ազատեց, իսկ մյուսին դատապարտեց տարբեր ժամկետներով բանտարկության:

Դեպքերին քաջատեղյակ ռուս պաշտոնյաներից մեկը, 1909թ. հունիսին լինելով Ադանայում, գրում է. «Իսկական մեղավորներն ու մարդասպանները, այսինքն՝ իշխանություններն ու մակեդոնական (երիտթուրքական) զորքերը, չեն էլ մտածում թաքնվել, դրա կարիքը նրանք չեն զգում, քանի որ հենց իրենք են ռազմական դատարանի և հետաքննչական հանձնաժողովների անդամներ»[41], հենց իրենք էլ այժմ պաշտպանում են կարգն այն երկրում, որտեղ իրենց ձեռքով կոտորած իրականացրին: Իսկ փոխհյուպատոսներից մեկն արձանագրում է. «Թող հիմա որևէ մեկը փորձի հերքել, թե բոլոր անդամները այս դատարանի, որի որոշումները բողոքարկման ենթակա չէին, Ադանայից չեն մեկնել ոսկով լի գրպաններով: Կոտորածի ժամանակ այդ ոսկին հիարկե խլվել էր հայերից... Հասարակ զինվորներն էլ ստացան իրենց բաժինը, չէ որ նրանք «բարի գործ» էին կատարել՝ օգնություն ցույց տալով իրենց հավատակիցներին այդ խնդրի կատարման ժամանակ: Այստեղ փորձում էին կոծկել այդ և նույնիսկ արդարացնել զինվորների այդքան խայտառակ արարքները»[42]: Ադանայի ջարդերի ականատես Համբարձում Աշճյանը իրավամբ նշում է. «Այլեւս որ պատերազմական Ատեանը կրնար զիրենք պատժել: Ով պիտի կրնար դատապարտելու համարձակիլ այս քիչ անգամ պատահած կործանումը՝ երբ զինուորին պատիւը խնդրոյ առարկայ էր»[43]:

1909 թ. Ադանայի կոտորածը հայերին ոչնչացնելու օսմանյան քաղաքականության համոզիչ վկայություններից է: Ադանան դարձավ երիտթուրքերի հետագա ցեղասպանական ծրագրերն իրականացնելու մեկնարկային կետ, իսկ օսմանյան պետության բոլոր քաղաքացիներին պաշտպանելու համար ստեղծված բանակն ապացուցեց, որ պատրաստ է իրականացնել ցանկացած ոճրագործություն:

33 Հայերի ցեղասպանությունն Օսմանյան կայսրությունում, նշվ աշխ., էջ 256:
34 Նույն տեղում, էջ 261:
35 Գասպարյան Ռ., նշվ. աշխ., էջ 67:
36 Հայերի ցեղասպանությունն Օսմանյան կայսրությունում, նշվ աշխ., էջ 259:
37 Գասպարյան Ռ., նշվ. աշխ., էջ 70:
38 Նույն տեղում, էջ 72:
39 Arikoğlu Damar, Hatıralarım, Milli Mücadele Çukurovada, İstanbul, 1961, s. 48.
40 Պարթեան Ս., Կիլիկեան Արհավիրքը, Կ. Պոլիս, 1910, էջ Ը:

Ani Voskanyan

On the Question of the Participation of the Army in 1909 Adana Massacres

Summary

1909 Adana massacres during which more than 30 thousand Armenians fell victim were organized and perpetrated by the central government of Young Turks. During the massacres the arsenals were opened and the crowd was armed by the instruction of the government. The second carnage which happenned under the pretext of the establishment of a «law and order» was committed by the assistance of the Liberation army, which itself confirmed the direct involvement of the government in the organization of the massacres.

Thus, the constitutional liberation army committed Adana massacres by the order of the central government.

41 Համբարյան Ա., Կիլիկիայի 1909թ. Հայկական կոտորածները, Պատմա-բանասիրական հանդես, 1988, N 4, էջ 29:
42 Геноцид армян в Османской империи, сборник документов и материалов, с. 206.
43 Աշճեան Յ., նշվ. աշխ., էջ,62: